այն Դեմետրիոսի կոչեաց զնա անդրէն 'ի վիճակ իւր։ Յետ 10 ամեայ մատենագրութեան՝ թղթով ընծայութեան եպիսկոպոսին իւրոյ առաքեցաւ յԱքայիա վասն եկեղեցական ինչ գործոց. յանցանել Նորա 'ի Պաղեստին՝ ձեռնադրեցին զնա երէց Թէոկրեստոս Եպիսկոպոս Կեսարու և Աղեքսանդրոս Երուսաղէմի 43 ամաց (228)։ Զայրացաւ Դեմետրիոս ընդ յափշտակութիւն իրաւանցն, և դնէր Որոգինեայ նախատինս յանցանօք մանկութեան, եւ յետ դարձի Նորա յԱքայիայ Ժողովով արգել 'ի վարդապետութենէ և մերժեաց յԱղէքսանդրիայ (231)։ Եւ յետ մեկնելոյ Որոգինեայ 'ի Պաղեստին՝ դումարեաց Դեմետրիոս միւս ևս ժողով և հան զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ և 'ի քահանայական պաշտամանց։ Իսկ նա եդ դպրոց ուսման քրիստոնէութեան անդէն 'ի Կեսարիա. դային եւ ժողովէին յամենայն կողմանց վարդապետք և եպիսկոպոսունք լսել զվարդապետութիւն Նորա, և բազումք աշակերտեալ եղեն արք երեւելիք։ Ի ժամանակս հալածանաց մեկնեցաւ 'ի կոչն Փիրմիլիանայ 'ի Կեսարիա Գամրաց, ուր պարապէր ուղղել զԱղէքսանդրացի կամ զԵոթանասնից թարգմանութիւնն և յօրինեալ կարգէր զՎեց Օրինական, և տակաւին էր ընդ բանիւք, յայն սակս համարձակագոյնս յանդգնէին թշնամիքն 'ի վերայ Նորա, որոյ վասն բազում անգամ տրտնջէ զանիրաւ գործոց հակառակորդաց իւրոց. և թէ աղաւաղեն և խանդարեն զգիրս Նորա մուծանելով բանս սուտս յանձանց։

Առ Դեկեան հալածմամբն ըմբռնեցաւ և Որոգինէս և արկաւ 'ի բանտ և 'ի յանհնարին տանջանս. յետ հաստատուն խոստովանութեան՝ գրեաց 'ի բանտէ անտի առ եղբարսն թուղթս բազումս լի միխիթարութեամբ և քաջալերութեամբ։ Թէպէտ և ազատեցաւ անտի, բայց մեռաւ յետ սակաւու 69 ամաց 'ի Տիւրոս (254). թերեւս 'ի լկանաց անտի զոր կրեաց։

Բարեկամք Նորա ունէին զնա 'ի պատուի, եւ փառաւորէին զլուսաւոր միտսն եւ զտոկունն ջան վաստակոց Նորա՝ կոչելով զնա աղամանդեայ եւ պղնձի։ Ամիաւ էին Նորա մատենագրութիւնք. այնչափ գրեաց, որչափ յետոյ չկարացին ընթեռնուլ. եօթն նոտարք արագագիրք զմի-